



ՓԱՅԼԱԿ ՄԻԱՄԱՆ

Ե Ջ Մ Ի Ա Ն Ե Ն

Մեր տեսիլքի լույս քներով քեզ վար բերինք երկինքներից,
Որ խոցոտված մեր սրտերի աղոթքի սուրբ տունը դառնաս,
Եվ երբ տրտում մեր հոգու մեջ մի կարիլ շողք ցողես քեզնից,
Լինես խաչված երազը մեր վերածնող ուժն երկնահաս:

Կառուցեցինք քեզ քար առ քար, շաղախիդ մեջ դրինք արյուն,
Մեր սրտից քեզ հոգի տվինք, մեր հավատից՝ տվինք կրակ,
Որ մեր կյանքի փշոտ ճամբին լինես պայծառ ուղեկիշ սյուն,
Թե իսկ բողբոջներ երկինքը մեր՝ շրենկներն օտար աստղերի տակ:

Մենք բերինք քեզ մեր հանճարի ստեղծագործ ուժն անսպառ,
Որ դու ինքդ օծես նրան ավազանիդ սուրբ մեռուկով,
Ապա դարձած զույն ու փանդակ, դարձած միտք, և՛ երգ, և՛ քառ,
Այն արձակես հպարտությամբ դարերն ի վեր մշտանուլով:

Մեր դաշտերի հացն անխմոր դրինք սրտիդ՝ սկիհիդ մեջ,
Բուրվառիդ մեջ կրակ դարձավ մեր խաղողի որբը մատղաշ,
Կանթեղիդ մեջ օր ու գիշեր բոցավառվեց մեր հույսն անշեջ,
Որ փոքորկի անեղ ժամին մեր փրկության լաստը դառնաս:

Ծրնկի եկանք ամենայն ժամ խորաններիդ առաջ լռին,
Համբուրեցինք մամուռ կապած քո քարերը հնամենի,
Ու մամուռն ընդ բորովեցինք մեր աղոթքը «խորհուրդ խորին»,
Որ քո զանգը դողանջի միշտ, որ դու լինես միշտ կենդանի:

... Եվ դու եղար մեր վերքերի առողջարար սպեղանին,
Եվ դու դարձար Աստծուն օրհնող հայ բուրվառը նվիրական,
Եվ դո՛ւ էիր, որ վեհորեն իմաստ տվիր մեր հանճարին...
Ու մենք քեզ հետ կլինենք միշտ, կապրենք ամբողջ և անբաժան:

